

Գուճապին եզրույթների ստորադասությունը

Բովանդակություն

Ներածություն	1
Գոհնաձին եջրոթթներ	3
Եջրոթթների ՏԵՍԱԿՆԵՐԸ	3
Ուսուցանողական ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	4
Հիմնական եջրոթթների ՍՏՈՐԱԴԱՍՈՒՄԸ	5
Հիմնական Գոհնների ՕՐԻՆԱԿՆԵՐ	6
Անգլերեն (11)	6
Հունարեն (7)	6
Ռուսերեն (12)	7
ԱՄՓՈՓՈՒՄ	7
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	7
ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	8

Ներածություն

Դպրոցից մեզ հայտնի է, որ հիմնական գույները վեցն են՝ սպիտակ, սև, կարմիր, կանաչ, դեղին, կապույտ: Սրանք, որպես հիմնական գույներ, առաջինը թվարկել է Լեոնարդո դա Վինչին (1452, Ֆլորենցիայի հանրապետության – 1519, Ֆրանսիայի թագավորություն) իր «Գեղանկարչության մասին» տրակտատում (Trattato della pittura, 1651). «Հնայաած, որ փիլիսոփաները ոչ սպիտակը, ոչ էլ սևը գույների շարքում չեն դիտարկում, քանի որ մեկը գույնի պատճառն է, իսկ մյուսը՝ նրա բացակայություն» (Ludwig, 1882), նկարիչները առանց դրանց գործել չեն կարող՝ գունային երանգներ ստանալու տեսանկյունից, սրանք կարեվոր գույներ են (Mach, 1914)¹: Նաեւ դեռ Նյուտոնից (1642 - 1727, Անգլիա) հայտնի է, որ սպիտակ գույնը իրականում տեսանելի կարմիրից մինչեւ մանուշակագույն գույների ինտենսիվությունների փոփոխության անընդհատ լուսակ է:

Թե ինչպես է մարդը այդ անընդհատ լուսակից ստանում ընդհատական գույներ, պարզ չէր: Ենթադրում էին, որ աչքը (ուղեղը) բոլոր գույները կառուցում է երեք, օրինակ՝ կարմիր, դեղին, կապույտ (Թոմաս Յունգ՝ 1773-1829, Մեծ Բրիտանիա) կամ կարմիր, կանաչ, կապույտ (Հերման Հելմհոլց՝ 1821-1894, Պրուսիայի թագավորություն) գույներից (մինչ օրս գունավոր էկրաններում օգտագործում

¹ Մախը մեջբերումները անում է ըստ (Ludwig, 1882), պարբերություններ՝ 254 եւ 255: Մի կարճ մեջբերում 254 պարբերությունից կա կապույտ գույնի ձեւավորման մասին նաեւ (Conway, 2023):

են RGB – red, green, blue – պիքսելներ գունային բազմազանությունը ապահովելու համար): Սակայն միայն է. Հերինգի (Karl Ewald Konstantin Hering, 1834 – 1918, Գերմանիա) շնորհիվ բացահայտվեցին գունաընկալման ճշգրիտ գործառույթների մանրամասները, որոնք ժամանակից ֆիզիոլոգիայի հիմքում են ընկած: Նա մի քանի կարեվոր դիտարկումներ արեց: «Սպիտակի համար պարտադիր չէ, որ բոլոր գույների միաժամանակ առկա լինեն: Այն կարող է առաջանալ սոսկ կապույտի եւ դեղինի խառնուրդից: Նաեւ, եթե դուք երկար նայեք կարմիր լույսին եւ հանկարծ անջատեք այն, կհայտնվի կանաչ հետպատկեր, եւ հակառակը: Տեղադրեք կարմիրը մոխրագույն ֆոնի վրա՝ աչքը կտեսնի կանաչը կարմիրի եւ մոխրագույնի սահմանին: Նա պարզեց, որ դալտոնիկ մարդը սովորաբար չի կարող տեսնել ո՛չ կարմիրը, ո՛չ էլ կանաչը: Ավելին, մինչդեռ գույների բազմաթիվ տեսակներ կարող են միաձուլվել՝ առաջացնելով նոր գույներ (օրինակ՝ կարմիրը եւ կապույտը ստեղծում են մանուշակագույն), կարմիրը չի կարող խառնվել կանաչի հետ, ոչ էլ կապույտը՝ դեղինի: Այսպիսով, նա եկավ այն եզրակացության, որ գույնը ծագում է հիմքային հակադրություններից՝ կարմիր եւ կանաչ, կապույտ եւ դեղին, ինչպես նաեւ սեւ եւ սպիտակ» (McNeill, Freiburger, 1993:93): Տեսողական համակարգը գործում է գույների հակադրության հիման վրա: Հատկանշական է, որ Հերինգը իր տեսության ապացույցները գտնում էր եւ ֆիզիոլոգիական՝ գույների ադապտացիայի փորձերից, եւ լեզվաբանական դիտարկումից, որ որոշակի գույների անուններ բնական խոսքում չեն միավորվում: Օրինակ՝ կարմրականաչ, դեղնականաչ, կամ սպիտակասեւ²: Շատ ավելի ուշ, ժամանակակից ֆիզիոլոգները հաստատեցին Հերինգի վարկածները գունային տեսողության գործընթացները ճշգրտելով: «Ցանցաթաղանթը գույները ընկալում է սրվակավոր կոշիկով բջիջների միջոցով: Եւ իրոք, սրվակավոր բջիջների երեք տեսակի են եւ նրանց արձագանքը առավելագույնն է մանուշակագույն (419 նմ), կանաչ (531 նմ), եւ դեղնավուն-կանաչ (558 նմ) լույսի ալիքներին: Սակայն սրվակավոր բջիջները պարզապես տեսողական գործընթացների գավիթն են: Դրանք ազդանշանները հաղորդում են ոչ թե անմիջապես ուղեղին, այլ հակառակ արձագանքի բջիջներ միջնորդներին: Այս բջիջները վերափոխում են հաղորդագրությունը հենց այն ազդակների, որոնք ուղեղն է ընկալում»³ (McNeill, Freiburger, 1993:93-94):

Ոչ բոլորն են համաձայն Հերինգի հետ եւ առաջարկում են, օրինակ՝ այլընտրական «օգտակար կողավորման» (Conway, 2023) մոտեցում, որում գունային ընկալումը հարմարեցման (adaptation) տեսանկյունից է դիտարկվում: Զխորանալով այդ հոգվածի առարկությունների հիմնավորվածության գնահատումների մեջ, նշենք, որ տեսության լեզվաբանական բաղադրիչի քննադատությունը ոչ թե հակասում է Հերինգի հակադիր զուգբերի տեսությանը, այլ պնդում է, որ երեք զուգբերից զատ կան այլ հակադիր, անհամատեղելի զուգբեր, օրինակ՝ «կանաչավուն մանուշակագույն», «երկնագույն վարդագույն», «նարնջավուն կոբալտ», կամ «դեղնավուն ինդիգո»:

² Ինձ չհաջողվեց գտնել (Hering, 1878, 1920) բնագրերը եւ արտաբերել հեղինակային ձեւակերպումները: Ենթադրաբար գերմանական համալսարաններում կան թվանշանային տարբերակները, բայց դրանք ինձ հասանելի չեն գերազանցապես լեզվին չտիրապետելու պատճառով: Հերինգի տեսության մանրամասն վերլուծությունը բերված է (Conway, 2023):

³ Ավելի ճշգրիտ տվյալներ եւ մանրամասներ կարելի է գտնել (Bowmaker & Dartnall, 1980), որտեղ սրվակավոր բջիջները դասակարգվում են կարճ (420 նմ, S-սրվակներ), միջին (534 նմ, M-սրվակներ), եւ երկար (564 նմ L-սրվակներ) ալիքների արձագանքող խմբերի:

Մարդու զգայարանների ոլորտի հասկացությունների լեզվական արտապատկերումը բնականաբար պահանջում է խնդիրը դիտարկել թե՛ ֆիզիոլոգիական, թե՛ լեզվահոգեբանական, եւ թե՛ մշակութային տեսանկյուններից (Kay, McDaniel, 1978; Conway, 2023): Լեզվամշակութային տեսանկյունից «տարահումարա լեզուն անսովոր է նրանով, որ ունի մակբայներ, որոնք ցույց են տալիս, թե որքանով է կիրառելի գունային եզրույթը, եւ խոսողները պետք է ավելացնեն այդ մակբայները ամեն անգամ, երբ որեւէ գույն են հիշատակում: Նրանք չեն կարող ասել «կապույտ», այլ քանակականացնեն պետք է «միջին կապույտ» կամ «բաց կապույտ» ասեն» (McNeill, Freiburger, 1993:95):

Մարդու գունային տեսողությունը եռաչափ է: Գույներ նշանկող կամ գույների հետ առնչվող եզրույթները բաժանվում են հետեւյալ անվանական խմբերի՝

1. Գունային երանգ (Hue) - ծիածանի գույները, օրինակ՝ կարմիր, դեղին, կանաչ, ևն. նշանակող, որ տարբերակվում են լույսի ալիքի հաճախականությանը համաձայն:
2. Հագեցվածություն (Saturation) - գույնի վառ եւ գունատ լինելը չափանշող:
3. Լուսավորություն (Luminosity) - գույնի ինտենսիվության կամ «պայծառության» չափանշող:

Նման եռաչափ տարածքի իրացումներից մեկը առաջարկել է Ա.Մանսելը (Albert Henry Munsell, 1858 – 1918, ԱՄՆ): Գույների դասակարգման այդ համակարգը ձեւավորվել է 20-րդ դարի առաջին կեսում (Munsell, 1905, 1912) եւ վերջնական տեսքի է բերվել 40-ականներին:

Գունային եզրույթներ

Եզրույթների տեսակները

Խոսքում գույները բնութագրվում են բերված երեք խմբերի իմաստույթների համակցությամբ՝ հարա- կամ համադրությամբ, օրինակ՝ ֆիններեն vaaleanpunainen վերլուծվում է vaalea (բաց) եւ punainen (կարմիր) ձեւույթների: Հայերենում կան հարադրական՝ բաց կապույտ, վառ կարմիր, մուգ ու պայծառ կարմիր (որդան կարմիր), եւ համադրական՝ դեղնավուն, ձեւեր: Որոշ լեզուներում համակցության փոխարեն միաբառ, արմատական եզրույթներ են գործածվում, օրինակ՝ голубой (ռուսերեն՝ բաց կապույտ), որ համ երանգն է արտահայտում, համ էլ լուսավոր[ված?]ությունը: Գունային երանգների արմատային իմաստույթները կոչվում են հիմնական եզրույթներ: Որոշ անվանումներ բացառություն են կազմում, օրինակ անգլերում առկա՝ maroon (շագանակագույն) եւ magenta (մանուշակագույն, կարմրակապույտ) հիմնական չեն համարվում, իսկ orange-ը, որն ակնհայտորեն առաջնային պտղի, եւ միայն երկրորդական՝ գույնի, նշանակություն ունի, համարվում է հիմնական:

Նման անհետեւողականություններից խուսափելու կամ, ավելի ճիշտ, անորոշությունները նվազեցնելու համար հստակ սահմանենք, թե ինչ է հիմնական գունային անվանումը: Այն պետք է լինի՝

1. Միարմատ եւ կարող է ունենալ միջան քերականական իմաստ (գործառույթ) ունեցող ածանց կամ մասնիկ (մասնիկը հարադրելի ձեւույթ է (Հայրապետյան, 2022:45): Վերջինս բացառում է գոյաբանական՝ օրինակ -ե (ոսկե), -ի[ց] (խնձորի[ց]), -գույն (մոխրագույն), կամ տրամաբանական (ժխտական), ան-, -զեծ: Զուտ քերականական ածանցների օրինակներ են՝ -ակաճ, -[ы.и]й, որոնց միակ գործառույթը ձեւի ածականացումն է:
2. Արմատի սկզբնական, առաջնային իմաստը պետք է գույն լինի. օրինակ՝ голубой (երկրորդական՝ հոմոսեքսուալ տղամարդ), красный (հնացած, երկրորդական՝ գեղեցիկ):

3. Հաճախ գործածվող. օրինակ՝ ծիրանի կամ խառնաշաղ(?) եզրույթները հազվադեպ են գործածվում, իսկ առաջինը (միգուցե խառնաշաղն էլ), բաղադրյալ է (տես #1 վերելում):
4. Ոչ հոշակագրային, ժամանակակից փոխառում. օրինակ՝ grī (թուրքերեն՝ մոխրագույն, ֆրանսերենից), ぐりーん (guriin, ճապոներեն՝ կանաչ, անգլերենից):

Այսպիսով, հիմնական գունային տերմինները պետք է համապատասխանեն ա) միարմատության, բ) առաջնականության, գ) հաճախականության, եւ դ) անհոշակագրականության չափանիշներին: Բնականաբար, լեզվական՝ կենսաբանական-մշակութային, ոլորտում դժվար է չափանշման որեւէ հստակ սահման անցկացնել: Orange, indigo, кίτρινο, коричневый, ևն եզրույթների հիմնականությունը վիճելի է:

Մյուս տեսակի՝ բաղադրյալ, իմաստույթները կանվանենք սահմանական կամ բացատրական: Օրինակ՝ շագանակագույն, բաց կաւմիր, թաց ասֆալտի գույն (գուգլեք «բալունչիկով ներկ»), ևն:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Գույների հիմնական անվանումներ ուսումնասիրողները (Բեռլին եւ Բեյ, 1969) սկսել էին աշխատանքը Ուորֆ-Սապիրի լեզվական հարաբերականության տեսությունը⁴ հաստատելու միտումով: Նրանք ուզում էին հասկանալ. գույների անվանումների ընտրությունը համայնքում պատահական է, թե օրինաչափ⁵: Նրանք տեղեկություններ, ցուցմունքներ էին հավաքել, օգտվելով Մանսելի 329 գույների հիմնօրինակ հավաքածուից, երկ- կամ բազմալեզու տեղեկատուներից (informant), որոնք ուսումնասիրության պահին բնակվում էին Սան Ֆրանցիսկոյի ծոցի տարածքում՝

1. Լիբանանյան արաբներեն
2. Բուլղարերեն (Բուլղարիա)
3. Կատալաներեն (Իսպանիա)
4. Կանտոներեն (Չինաստան)
5. Ամերիկյան անգլերեն


⁴ Իմ եւ ժամանակակից ռացիոնալ ուղղության լեզվաբանների կարծիքը այս տեսության մասին եւս արտահայտել եմ կալքի բազմաթիվ էջերում, [Ի՞նչ է լեզուն](#) եւ [Reviewing Thought-Based Linguistics](#) ներառյալ: Տեսության հիմնավորվածությունը խնդրահարույց է, իսկ կարեվորությունը, նպատակը՝ անհասկանալի: Ժամանակի առատության դեպքում կարելի է կարդալ [Linguistic relativity and the color naming debate](#) ինչպես նաեւ աշխատության քննադատությունները՝ (Saunders, 2000), (Levinson, 2000):

⁵ Հետազոտության արդյունքում հայտնաբերված օրինաչափությունից հետեւում է, որ գույների անվանումները ոչ թե լեզվահարաբերական են, այլ բացարձակ կենսաբանական՝ անկախ մշակույթից եւ լեզվից, գունային եզրույթները ավելացվում են որոշակի հաջորդականությամբ: Հետաքրքրական է, որ նույնիսկ այդ օրինաչափությունը հայտնաբերելուց հետո, Պ.Բեյը շարունակում է կիսապաշտպանի դեր կատարել (Reiger & Kay, 2009): Ավելի զարմանալի է, որ նա, լինելով Լ. Ջադեի «աղոտ տրամաբանության» (fuzzy logic, տես (Հայրապետյան, 2022:195-196,314)) խմբի անդամ, 1978 թ. 2. ՄկԴենիելի հետ համատեղ (Kay, McDaniel, 1978) վարկած է առաջադրել է, որ « գույների անընդհատականության հիմքում ընկած նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմի լավագույն մոդելները պետք է աղոտ տրամաբանության վրա հիմնվեն» (McNeill, Freiberger, 1993:93): Հուշագրավ է հետեւյալ եզրահանգումը. «Այսպիսով, գոնե գույների դեպքում, ոչ թե ընկալումն է պալմանավորվում լեզվով (հմտ. Սապիր եւ Ուորֆ), այլ լեզուն ընկալումով (Kay, McDaniel, 1978)»: Այս դեպքի համար ռուսերեն մի հրաշալի ասացվածք կա՝ «ЛОМИТЬСЯ В ОТКРЫТУЮ ДВЕРЬ»: Բայց ամենագարմանալին եւ առեղծվածալինը այն է, որ սա միակ դեպք չէ, երբ բացարձակապես ճիշտ մեկնաբանելով իրականությունը, հետազոտողները շարունակում են պնդել, որ միգուցե անհիմն մի տեսությունն այնուամենայնիվ մոգականորեն ճիշտ է, տես՝ [Reviewing Thought-Based Linguistics](#):

6. Եբրայերեն (Իսրայել)
7. Հունգարերեն (Հունգարիա)
8. Իբիբիո (Նիգերիա)
9. Ինդոնեզերեն (Ինդոնեզիա)
10. Ճապոներեն (Ճապոնիա)
11. Կորեերեն (Կորեա)
12. Մանդարին (Չինաստան)
13. Պոմո (Կալիֆոռնիա)
14. Իսպաներեն (Մեքսիկա)
15. Սուահիլի (Արեւելյան Աֆրիկա)
16. Տագալոգ (Ֆիլիպիններ)
17. Թայերեն (Թաիլանդ)
18. Յելտալ (Մեքսիկա)
19. Ուրդու (Հնդկաստան)
20. Վիետնամերեն (Վիետնամ)

Հիմնական եզրույթների ստորադասումը

Հետազոտությունները բացահայտեցին, որ լեզուներում գոնային հիմնական եզրույթների թվի եւ ցանկի տարբերությունները օրինաչափ են: Հիմնական գույների եզրույթների թիվը սահմանափակ է եւ նրանք առանձին մշակույթներում օգտագործվում են համեմատաբար ֆիքսված հերթականությամբ: Այս հերթականությունը սահմանվում է I - VII փուլերում, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ գծագրով՝



Բոլոր լեզուներում կան առնվազն երկու գոնային անվանում, որոնք նշանակում են մուգ (կամ սառը) եւ բաց (կամ տափ) եւ մեկնաբանվում որպես սպիտակ եւ սև գույներ: Սա I փուլն է:

Այս եզրույթները լայնորեն գործածվում են չնշանակված, սահմանելի գույներ նկարագրելու համար: Օրինակ՝ Նոր Գվինեայի Յալի լեռնաշխարհի բնակիչները արյան գույնը նույնացնում են սևին. արյունը, որպես համեմատաբար մուգ հեղուկ, խմբավորվում է նույն գոնային դասում, ինչ սևը:

Բասսա լեզվով գույների համար երկու իմաստությ է գործածվում (McNeill, 2008)՝ զիզա (սպիտակ, դեղին, նարնջագույն, եւ կարմիր) եւ ճուի (սև, մանուշակագույն, կապույտ, եւ կանաչ):

Պիրահա լեզվում միայն գույների բացությունն ու մթությունն է տարբերակվում (Kay, 2007):

Արեւմտյան Նոր Գվինեայի դանի լեզուն նույնպես տարբերակում է միայն երկու հիմնական գույն. միլի՝ սառը/մուգ երանգների համար, ինչպիսիք են կապույտը, կանաչը եւ սևը, եւ մոլա՝ տաք/բաց գույների համար, ինչպիսիք են կարմիրը, դեղինը եւ սպիտակը (Saunders, 1992, Rosch Heider, 1972):

Եթե լեզվում կա երեք գունային իմաստույթ, ապա երրորդը կառմիրն է (II փուլ): Այս լեզունե-
րում գույները դասակարգվում են ոչ թե պայծառության երկու խմբում, այլ փոխարենը յուրաքանչյուր
եզրույթ ընդգրկում է գույների մի լայն շրջանակ: Մասնավորապես, կապույտը եւ այլ մուգ երանգ-
ները շարունակում են նկարագրվել որպես սեւ, դեղին եւ նարնջագույն գույները միացվում են կար-
միրն, իսկ մյուս պայծառ գույները շարունակում են խմբավորվում են սպիտակի հետ:

Բամբարա լեզվում կան երեք գունային եզրույթներ՝ dyema (սպիտակ, բեժ), blema (կարմրա-
վուն, դարչնագույն), եւ fima (մուգ կանաչ, ինդիգո (մուգ կապույտ), եւ սեւ):

Եթե լեզվում չորս գունային իմաստույթ կա, ապա չորրորդը կամ դեղինն է, կամ կանաչը (III փուլ),
իսկ եթե հինգ, ապա դեղինն ու կանաչը (IV փուլ): Ուսումնասիրված լեզուների մեծամասնությունում
դեղինը նույնացնվում է կանաչին, օրինակ՝ կոմի լեզվում, որտեղ կանաչը համարվում է դեղինի՝ ВИЖ
(վիժ), երանգ, որը կոչվում է турун виж (տուրուն վիժ) «խոտի դեղին» (Rueter, 1996): Բայց նիգերիայի
իբիբիո եւ ֆիլիպինյան հանունու լեզուներում ընդհակառակը՝ կանաչն է գործածվում դեղինի
փոխարեն:

Օվահիմբան օգտագործում է չորս գունային անվանում՝ զուզու (կապույտի, կարմրի, կանաչի եւ
մանուշակագույնի մուգ երանգներ), վապա (սպիտակ եւ դեղինի որոշ երանգներ), բուբու (կանաչի եւ
կապույտի որոշ երանգներ), իսկ դամբու (կանաչի, կարմրի եւ շագանակագույնի ոչ մուգ երանգներ)
(Roberson et al, 2006):

Վեց գունային իմաստույթ ունեցող լեզուներում (V փուլ) կապույտը տարբերակվում է սեւից
կամ կանաչից, իսկ VI փուլում ավելանում է շագանակագույնը՝ յոթերորդ հիմնական գունային եզ-
րույթը: Դրանից հետո կարող են վարդագույն, մանուշակագույն, կամ մոխրագույն (գորշ) իմաս-
տույթները ի հայտ գալ:

Հիմնական գույների օրինակներ

Անգլերեն (11)

1: black, white; 2: red; 3-4: green, yellow; 5: blue; 6: brown; orange (?); 7: pink, purple, and gray (grey).

Անգլերենում երկրորդական գործածման հետաքրքիր օրինակներից են ազգանունները: Black,
White, Green, Brown, Gray, ազգանուններ են, իսկ red, yellow, blue, orange, pink, purple՝ ոչ (հազվադեպ):

Հայերեն (7)

1: սեւ, սպիտակ (ճերմակ); 2: կարմիր: 3-4: դեղին, կանաչ; 5: կապույտ; 6: [խարտյաշ?]; 7:
գորշ (?).

Սահմանական ձեւերն են՝ մոխրագույն, շագանակագույն, մանուշակագույն, վարդագույն, որ-
դան կարմիր (բոսորագույն), թաց ասֆալտի գույն. ծիրանագույն (ծիրանի), ոսկեգույն, արծաթա-
գույն, ցորենագույն: Բարբառային (ժողովրդկան)՝ կյաժ: Հնացած՝ խարտյաշ(?):

Գույներ ուղեկցող իմաստույթներ՝ մութ, մուգ, թանձր(?), բաց, վառ, պայծառ(?), թույլ, աշ-
խույժ(?), փայլուն, անփայլ(?), փայլը կորցրած, մուսլ(?), աղոտ, գունաթափ, գունատ, ևն: Խոնա-
նալ, գույնը գցել, փայլազրկվել(?): Բարբառային (ժողովրդկան)՝ խանկռել:

Ազգանուններ՝ Ճերմակյան, Սեւիյան (Սեւիկյան), Կանաչյան, Կապուտիկյան (Ավետիսյան,
1987:104). Կարայան (ԱՀ. Սեւյան?), Կարմիրյան, Կարմիրմորուքյան (Աքսակալյան, Մավիսակալյան),
Կապույտյան, (Ավետիսյան, 2000):

Տեղանուններ՝ Սպիտակ, Կարմիր (գլուղ, Փոքր Հայք)

Ռուսերեն (12)

1: черный, белый; 2: красный (алый), 3-4: желтый; зеленый, 5: синий, голубой, 6: коричневый (кора?), оранжевый (?) 7: серый (сера?), розовый (?), фиолетовый (фиалка, violet-овый?).

Երկրորդական՝ красные (մերոնք), белые (թշնամի), коричневые (ֆաշխա):

Ազգանուններ՝ Белов, Чернов, Краснов, Алов (?), Желтов, Серов (?), Фиолетов (?):

Ամփոփում

Հայերենի գունային բառապաշարի ժամանակակից՝ կորպուսային, հաշվողական, վիճակագրական, մեթոդներով ուսումնասիրման կարիք կա: Նախ պետք է հատկանշել բառապաշարի սահմանները, օրինակ՝ ա) գունային երանգ, բ) հագեցվածություն, գ) լուսավորություն, դ) սահմանական ձեւ, նշանակող իմաստույթներ: Այդ բոլոր գունային եզրույթների բառագիտական՝ ծագում, ստուգաբանություն, պատմություն, ձեւաբանություն, ևն, քարտավորում կատարել: Արձանագրել երկրորդական գործածումները, ժամանակակից հայերենում գործածման հաճախական «[ջերմային](#)» քարտեզը:

Այս ամենը ոչ միայն հայերենի, այլ մյուս լեզուների համար էլ է պետք անել. ինչպես մասնավոր լեզվի շրջանակներում առանձին ուսումնասիրություն, այնպես էլ համեմատական: Օրինակ՝ հետեւել տարբեր լեզվական խմբերում գունային իմաստույթները հայտնվելու հաջորդականությունը, ժամանակագրությունը, փոխառությունները, ձեւավորման այլ ճանապարհները:

Հետաքրքրական է երկրորդական գործածման համաեռատությունը, մասնավորապես ազգանուններում:

Գրականություն

B.Berlin, P. Kay, (1969), Basic Color Terms: Their Universality and Evolution (*Գունային հիմնական եզրույթներ՝ դրանց ընդհանրությունը եւ էվոլյուցիան*), Berkeley: University of California Press

J. K. Bowmaker, H. J. A. Dartnall, (1980). Visual pigments of rods and cones in a human retina. Journal of Physiology (London), 298, 501–511.

B.R. Conway, S. Malik-Moraleda, E. Gibson. [Color appearance and the end of Hering's Opponent-Colors Theory](#), Trends in Cognitive Sciences, Volume 27, Issue 9, 2023, pp. 791-804.

E Hering (1878). Zur Lehre vom Lichtsinn. In: L. Hermann (Hg.), Handbuch der Physiologie, Bd. 3, Teil 1. Leipzig: Vogel.

E Hering (1920). Grundzüge der Lehre vom Lichtsinn. 2., verb. Aufl. Leipzig: Engelmann.

P. Kay, C.K. McDaniel, (1978). The Linguistic Significance of the Meanings of Basic Color Terms. Language, 54(3), 610–646.

P. Kay, (2007). Pirahã Color Terms.

S.C. Levinson, (June 2000). Yeli Dnye and the Theory of Basic Color Terms. Journal of Linguistic Anthropology. 10 (1): 3–55.

H. Ludwig, (1882). Quellenschriften zur Kunstgeschichte und Kunsttechnik des Mittelalters und der Renaissance. Braumüller, Vienna.

E. Mach, (1914). The Analysis of Sensations and the Relation of the Physical to the Psychical. Revised and supplemented from the fifth German edition: Beiträge zur Analyse der Empfindungen. 5., vermehrte

Auflage. J. A. Barth, Leipzig 1906. The Open Court Publishing Company, Chicago. 1914. Reprint, Forgotten Books. 2012.

D. McNeill, P. Freiburger. (1993) Fuzzy Logic. Simon & Schuster. NY.

N.B. McNeill, (28 Nov. 2008). Colour and colour terminology. Journal of Linguistics. 8 (1): 21–33.

A.H. Munsell, (1905). A Color Notation. Boston: G. H. Ellis Co.

A.H. Munsell, (Jan. 1912). A Pigment Color System and Notation. The American Journal of Psychology. 23 (2): 236–244.

D. Roberson, J. Davidoff, I.R.L Davies, L.R. Shapiro, (2006). Colour categories and category acquisition in Himba and English. In Pitchford, Nicola; Biggam, Carole P. (eds.). Progress in Colour Studies. Vol. II Psychological aspects. John Benjamins Publishing Company. pp. 159–172.

Reiger, Terry; Kay, Paul (28 Aug. 2009). Language, thought, and color: Whorf was half right. Trends in Cognitive Sciences. 13 (10): 439–446.

E. Rosch Heider, (1972). Probabilities, Sampling, and Ethnographic Method: The Case of Dani Colour Names. Man. 7 (3): 448–466.

J.M. Rueter, (1996), Komia-anglisköi-fĩnsköi

B. Saunders, (1992). The Invention of Basic Colour Terms. R.U.U.–I.S.O.R.

B. Saunders, (2000). Revisiting Basic Color Terms. The Journal of the Royal Anthropological Institute. 6 (1): 81–99.

Տ.Մ. Ավետիսյան, (1987). Հայկական ազգանուն. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Ե.

Տ.Մ. Ավետիսյան, (2000). Հայոց ազգանունների բառարան. ՀՀ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ. Վան Արյան. Ե.

Ա. Հայրապետյան, (2022) [Բնական խոսքի քնդհանրական ներկայացման մի տարբերակի մասին](#). Agoulis, Concord.

Վերանայումների պատմություն

Name	Date	Reason for Changes	Version
Արամ Հայրապետյան	11/24/25	Նախնական տարբերակ	0.1